ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԿ ԱՆՁ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան,Վազգեն Սարգսյան 3/3 հասցեում, ստորև ներկայացնում է N ՏԿՆ-2018/ՀՀ-2018-1072-3 ծածկագրով մեկ անձ ընթացակարգի արդյունքում 10.12.2018թ. կնքված պայմանագրում 20.12.2018թ կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրի ժամկետի երկարացում:

Փոփոխության նկարագրություն: Լուսաղբյուրի համայնքի ներհամայնքային ճանապարհի նորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ

Համաձայնագրի գինը կազմում է 354 300 դրամ

Փոփոխության հիմնավորում: 10.12.2018թ *կնքված թիվ* N ՏԿՆ-2018/ՀՀ-2018-1072-3 *պայմանագրի 7.5 կետ:*

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Անի Պետրոսյանին:

Հեռախոս՝ 010 59-00-38

Պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1
10.12.2018թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-2018/ՀՀ-2018-1072-3 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «20» դեկտեմբերի 2018թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ս. Ամիրխանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Շինէքսպրտ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Առաքելյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, և հիմք ընդունելով Կողմերի միջև 10.12.2018թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-2018/ՀՀ-2018-1072-3 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը համաձայնվեցին.

Կասեցնել պայմանագրի կատարման ժամկետը մինչև 2019թ. մայիսի 31-ը:

Սահմանել ծառայությունների մատուցման նոր ժամկետ, սկիզբը հաշվելով 2019թ. մայիսի 31-ից սկսած՝ 30 օրացուցային օր:

Լրացնել պայմանագրում 4.1 կետը հետևյալ խմբագրմամբ <<Պայմանագրի գնից՝ մինչև 354 300 (երեք հարյուր հիսունչորս հազար երեք հարյուր) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ք. Երևան, Տիգրան Մեծի 3/3 Կենտրոնական գանձարան Հ/Հ 900010200[illegible] ՀՎՀՀ 02265518	<<Շինէքսպրտ>> ՍՊԸ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 77/13 <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Վաբաձորի մ/ճ Հ/Հ 11500308815600 ՀՎՀՀ 06944187
(ստորագրություն)	(ստորագրություն)